

« ցօղ իմաստասէր. այլ ի բազում առ-
« նելեաց հաստատի... »:

*

Պետրոս այս խրատականէն վերջը, « Այլ խրատ վառն ազդի ցտոց, որ մին ժամն կտրէ բռնիկը » վերնագրով գլուխ մը կը սկսի, որուն սկզբնական մասը կարեւոր կը համարիմ գրել, զի ընդհանուր բժշկական պատմութեան կը վերաբերի. ահաւասիկ այն.

« Եւ այս գրքիս անունն թաղվիմ ըռաւ « պան կոչեն և այնոր ընկերն մինն հաւ « ճըլպայայեամն է, Եւնթիափոյնի իսայ. « Պաղտատայ կշտին, Ջիշրացի է, զայս « գիրքս թարգմանողն: Սա Բ գիրք է թարգ- « մանել, մէկն թաղվիմ ըռապան մէկն « այլ հաճւպայեամ: Եւ զայս գիրքս մահ- « մատ զաքարիան թարգմանել է, որու « ելի նդապն ոսգի կասեն »:

Պաղտատայի հեղինակներ են ասոնք, որոնք մեր բոլոր բժշկարաններու մէջ կը յիշուին, բայց այս ձեռագրիս մէջ ասոնց գրուածներէն խիստ համառոտ մաս մը մէջ բերուած է:

*

Այս կը գրէ Արփիկես խոտին, Համասփիտ ծաղկին, Լուսին խոտին, Մարդածաղիկ բոյսին, Լօշտակ խոտին հրաշագործ պատմութիւնները, բայց խիստ համառոտ, և շարունակելով զեռ բժշկարանը՝ կը գրէ շատ մը զեղատոմսեր զանազան ցաւերու համար. ու կը վերջացնէ՝ գրելով բառերու մեկնութիւններու երկու Գլուխ և հուսկ՝ այն Յիշատակարանը, զոր արտասագրեցի վերեւ:

Չնուզիրս իւր նախորդին հետ ցոյց կու տայ, թէ բժշկութիւնը սրջափ յարգի եղած է վանի մէջ, և անշուշտ այդ բանին գիտակ էր վանեցի Հոգեւոյս Գաբրիէն Եպ. Սրուանձտեանց, որ իր Մանանայ, Համով Հոտով գեղեցիկ աշխատութիւններուն մէջ

այնչափ հետաքրքրական էջեր նուիրած է վանայ հայրենի աւանդական բժշկութեան, և կարեւոր գումար մ'ալ յետոյ կտակ ըրած, որպէս զի իւր Հայրենիքին մէջ Հիւանդանոց մը շինուի:

Մենայէն երախտապարտ եմ Հ. Եսայի Տայեցի բարեկամիս, որ գեղեցիկ առիթը ընձեռեց ինձ, վան բաղաբէ մէջ երկրորդ բժշկարանն ալ ճանչնալու:

ՏՕԹ. ՎԱՐԱՄ Յ ԹՈՐՈՍԵԱՆ

Վիեննայի — Ս. Ղազար
6 Փետրուար 1925 (Շարունակելի)

ԼԵԶՈՒՍՎԻՏԱԿԱՆ

Ս Ո Ր Ա Վ Ա Լ

Մեծ. Պ. Թիրետրեան յստով գրութիւն մ'ուղղելով Խմբագրութեանս՝ կ'անդրադառնայ վերտին այս խեղրական յատիս նկատմամբ յարուցուած բռնավիճին. սակայն դիտելով որ իրեն ետ տեսութիւնք ետ յոյս մը չեն ծագեր խեղրայն ուղղակի յոժման համար, դիտելով մտնուանց որ յերթիս և զանազան ազգային պարբերականներու մէջ սոյն բռնավիճի մասնակցող արգոյ բռնասերք կը ձանկեռն հուսատարայեա որ իւրեղոյս յոժմամբ համեմատական լեզուագիտութիւն միայն կարող է տայ, կը ներկայացնենք ստալիկայ յոյսածով՝ մասնագետի մը տեսութիւն և ստուգաբանութիւնը, և այսու այլ ևս մեզի համար փոփոցած կը համարի՞նք արդէն իսկ շատ յերկարած վիճարանութիւնը:

ԽՏԹ.

Խնդրոյս ներկայ վիճակին մէջ մեր արգոյ բանասէրք համաձայն կը թուին ընդունելու Սորակոյ ձեռն իրեն հարազատ բառ և ոչ արդիւնք զըջագրական սխալի:

1. «ՍՐՈՒՆԱՆՏԵԱՆԵ ՀԻՌԱԿԱՆՈՅԻ ԿՏԱԿ», Արեւիկ. Կ. Պոլս., Թիւ 2836, 17 յուլիս 1898.

Այս հիման վրայ հաստատուած՝ կը համարինք որ ի զուր է պարսկական կամ օտար լեզուի եկամուտ փոխառութիւն տեսնել բառիս մէջ, ըստ մեր կարծեաց Սրբախալ ամէն հանգամանք և յատկութիւն ունի զուտ հայերէն հարազատ բառ նկատուելու, նման այն ազնուական բառախումբը կազմողներու՝ զորս համեմատական լեզուագիտութիւնը կը դասակարգէ իրրի բնիկ հարազատ տոհմային բառեր հայերէն լեզուի, որոնք քոյր լեզուախումբերու մէջ պահուած համազօր արմատներով կը լուսաբանուին հաստատուն ստուգաբանական օրէնքներու համաձայն:

Ներկայ խնդրոյս լուծման բանալին կուտայ մեզ հայերէն և տաօի ստուգաբանական համեմատութիւնը, դիտելով որ հնդկերոպական ցեղի յունալատին ճիւղերու մէջ *u* = *s* յաճախ յառաջ կը բերէ համապատասխան *c*, *k* ձայները, կանոն մը որուն ապացոյցը նաև հայերէնի բառակազմութեան մէջ յայտնի կը տեսնենք *ք* և *ս*-ի լծորդութեամբ շատ առիթներու մէջ:

Համաստութեան համար համեմատութեան առնունք հոս միայն մի քանի բառեր, որոնց ստուգաբանութիւնը կը հաւաստէ մեր եզրակացութիւնը: Առնունք սիրտ, սէր, սար և սոց բառերը, որոնց կարելի է զուգել դեռ շարք մը զուտ բնիկ հայկական բառեր և սկզբնատարով:

ՍԻՐՏ. ունի իւր համապատասխանը հնդեր. *karđ* արմատին մէջ, որ Սանսքրիթի մէջ կուտայ *hrđ*, *khrd* և *skard* ձևերը, զենտի մէջ *zarədaya*, յունարէն *καρδία*, *καρ* արմատէ, և լատիներէնի մէջ *cor*, *cor-dis*. Ինչպէս հին իռլանտ. *cride*, գոթ. *hairta* յորմէ անկոսարս. *herta*, անգլ. *heart*, գերմ. *herz*, լիթուաներէն *szirdis* և եկեղ-սլաւ. *srudice* և այլն:

ՍԵՐ. որ կը համապատասխանէ հնդեւրոպ. *kei*, *koiro* և *gar*, *ger* արմատի, յորմէ սանսքր. *çeva* և *kam*, *kamra*. յունարէն արմատն անստոյգ է, կարելի է համեմատել ընդ *κάρ* թէպէտ և ոչ ա-

պահով. լատին. *car* ի *caritas* և *carus*, լիթ. *geras*, եկ. *սլաւ* *zra*, *zreti*, գոթ. *kaerr* անկոսարս. *cearu*, *cearig*, որուն հետ թերեւ կարենայ համեմատուիլ նաև հայերէնն արկայ աւելի քան ընդ սիկաւրեանն հոովմայեցի:

ՍՄՐ. (զլուի) համապատասխան հնդեր. *kar*, *kara* յորմէ սանսքրիթ. *çiras* սկզբնաբար *çaras*, զենտ *sarah*, յունարէն *κάρ* և *κάρη*, լատիներէն *cer* պահուած ի բառս *cervi*, *cerebrum* թերեւ նաև ի *culmen* և մանաւանդ ի *celsus*.

ՍՈՒԳ. որուն համապատասխանն հնդեւրոպական արմատներու մէջ ունինք *ku* կամ *kuk* յորմէ յառաջ կուտայ սանսքրիթի մէջ *kuj* և *çoka*, յունարէն *κωκυθ*: լատիներէնն աներևութացած կ'երևի՝ *եթէ* չուգենք *gug* արմատ մը նշմարել ի *luc-tus*, *lugeo* համեմատ յունական *γογγυ-çειν*-ի, եկեղ. *սլ.* *kujaja*, *skycya* լիթուաներէն *szaukti*. և այլն:

Արդ այս հանգիտութեան կամ համեմատութեան զօրութեամբ մեր խնդրական սրբախալ-ի սր արմատն ալ իւր համազօր պիտի ունենայ յունալատին լեզուախումբի մէջ *ç*, *k* ձայնով համապատասխան արմատ մը: Եւ յիրաւի կը տեսնենք հնդեւրոպական սկզբնական *kur* արմատի մը լծորդ՝ սանսքրիթ *ura* որուն մէջ սկրեւտառ (*k*) *h* հազագի կորուստն ակնյայտնի է, համեմատելով յունարէն *κῆρ* և լատիներէն *cura* բառերու: Այս մի և նոյն արմատը կը գտնենք նաև անկոսարսն և գերման լեզուախումբերու մէջ *kara*, *koera*, *kurr*, *queran* բառերով մէկ կողմանէ և միւս կողմանէ *sorge*, *sorry*, *sorrow* բառերով:

Հետեւաբար հայկական արմատ բառս սր կը նշանակէ իւր քոյր լեզուներու նման հոգ, խնամք, ուստի և բարզութիւնս սրբախալ = խնամատար, հոգաբարձու և համապատասխան է իմաստով և ձայնիւ լատին *curagus* (*curagendarius*)

բառի, որ բացի ներթական հոգատարի նշա- նակութենէ, ունի նաև պետական գործերու պաշտօնակալի, վերակոցոցի իմաստը: Ու- րեմն ինքրական սորակոյ ասպատակին է ինճամկալ վերակացոց պաշտօնեայն ար- քունի ասպատակներն:

Բացի այս յունաւատին հանգիտութենէ՝ նոյն իսկ հայերէնի ներքին կազմութեամբ կարելի է հաւաստել որ արմատին իմաս- ար, լծորդելով զայն զբական լեզուի մէջ պահուած հումանիշ արմատի մը գոր ձևով է հնչմամբ, յորմէ գորով է անագորայն = իրբև անգորով. զարձակ համեմատութեամբ ուրիշ ժողովրդական բայց հին ձևի միև- նոյն գոր = տր ամատին որ պահուած է գուրգուրալ (ցրգալ) մի է նոյն իմաստն ու- նեցող բառին մէջ:

Հ. Յ. ԱՊՅԵ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ե Ր

ՈՍԿԵՐԵՐԱՅԻ ԺԱՌԵՐՈՒՆ ՄԷՋ

(ա. Վնստի 1861)

ՄԱՆՕԹ. Ոսկերերանի ճառերուն մէջ երկցած նոր բառերը՝ որոնք Հայկազեան բառարանի մէջ մտած չեն, առնուած են արդէն Առձեռնի մէջ: Այս բառերը ես հոս նորէն չեմ յիշեր: Կը խօսիմ միայն այն քանի մը բառերուն վրայ՝ որոնք կամ մոտոցուած են Առձեռնի մէջ ալ և կամ առանձին նկատողութեան պէտք ու- նին:

1. Կարամուտ

Անդրիական ճառերուն մէջ (էջ 800) Ոսկերերան խօսելով զլիւր սակրային կազ- մութեան վրայ՝ կ'ըսէ. «Եւ պատճառ՝ զի մի յեկեղեց վտանգից կամ զանից ի վերայ զլիւրն՝ փնաս կրեսցեն զգայարանքն, այլ զի ընդդէմ կացցեն զօղուածքն և առանց փնասու զնա պահեսցեն. ըստ որում ոչ

եղև մի զօղուած և ոչ մի սակր որ ծածկէ զնա, այլ յամենայն կողմանց կարս բա- զուս ունի և բազում զգուշութիւն նորա ըստ ամենայն պատճառի»: Հոս կար՝ ինչ- պէս ունի նաև ԱՐ, կը նշանակէ «ան- դամներուն յօղ»: Ոսկերերան այնուհետև կ'աւելցնէ. «Իսկ ծիտը արտաքուստ ստէպ մտելոյ դիրաւ արտաքս քաղի, ոչ կա- րելով ազդել ի ներքս ընդ այնմ կորա- մուտս սակրազօղիցն»: ԱՐ ստորագծեալ բառին տեղ ունի կորամուրք «անդամոց կպած՝ կցած տեղերը»: Որովհետև այս ձևը կրնայ ստուգարանով իրր կար և ամուր բառերէն կազմուած բարդ մը, ուստի յայտնի չէ՝ թէ կորամուրք հասարակ տը- պագրական վրիպան է մ'է, թէ՛ հիմնուած է ձեռագրիներու ստոյգ համեմատութեան վրայ և ընդհակառակը կորամուտ ձեւն է վրիպակ: Ըստ իս ուղիղ ըլլալու է վեր- ջինը, իբր բարդուած կոր և մուտ (մտա- նել) բառերէն, ինչպէս կը թուի ցուցնել նաև մտեոյ բառը: Կարամուտ կը նշանակէ ուրեմն «զօղերուն, յօղուածներուն մուտ- քը»: Յունարէն բնագրին համեմատութիւնը կրնայ վճեղ խնդիրը:

2. Հարմարեղ

Չի ոչ ալիքն անհամոյրը հեղձուցին զնա և ոչ զազանակերպն որ եկուլ զնա՝ ասպականեաց և կորոյս, այլ պահեսաց զնա և տարաւ հասոյց ի քաղաքն (էջ 39). — Խօսքը Յովնանի մասին է:

Այս հատուածին մէջ սպակոնեաց բառին դէմ օրինակ մը ունի հարմարեաց, այլ օր. «հարեաց և կամ հայեաց զնա»:

Իստարանները չեն յիշեր հարմարեղ ձևը. բայց այս բառը իրօք կայ գաւա- սականներուն մէջ՝ «ցնցել, տրորել, ըս- րունակ տրորելով վրան կեզ բանալ» իմաստով:

3. Ուլկազ

Ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա այր զգեցեալ բաղէն (այս է պատմուճան